

ղեկիր մը՝ Թաւէրնիէ 1650-ական թուականներուն կը յիշէ հետեւեալը.

«Խօջայ Նազար, մին զլիսաւոր հայերէն, որ Զուղայէն մեկնած էր, առեւտուրով հաւրստանալով եւ Շահ Ապպասի մօտ մեծ համբաւ ունենալով, ինչպէս նաեւ անոր յաջորդին Շահ Սէֆիի մօտ, որ զայն Քալանթար, կամ Հայ Ժողովրդին զլիսաւոր դատաւոր կարգեց, կառոյց (Խօջայ Նազար) երկու մեծ պանդոկներ, ի պատիւ իր երկրին, (հին) Զուղայի մէջ, (Արաքս) գետին իւրաքանչիւր կողմը հատ մը: Ան ծախսեց 100,000 գրառնէն աւելի դումար մը, սակայն մեռնելով երկու յիշատակելի գործերը անաւարտ թողուց»: (41)

Յաւալի է ըսել, որ Խօջայ Նազարի ուրիշ ձեռակերտներուն մասին յիշատակութիւն կը պակսի: Հ. Ալիշան հետեւեալը կը գրէ, առանց աղբիւրը յիշելու.

«Մերձ ի կամուրջն (Երասխի ի հին Զուղայ) եւ յեզր Երասխայ կանգնեալ կայ աղբուակերտ կամ կարմիր կակուղ քարամբ աշտարակաձեւ շինուած երկյարկ, պարսիկ ոճով, Կիւլիստան կոչեցեալ (վարդոց), եւ Գմբէթ օրիորդի Գիւմպէղ-ի-տուխտէր. զօրիորդ ալ համարին ոմանք ի լինել դուստր Խօջայ Նազարի. 12 անկիւն է վերին յարկն, պէս պէս դրուազօք, ստորինն քառակողմն, ընդ որ մուծանէ դուռն ի կամարակապ սենեակ, ունելով ի վերոյ զլանաձեւ ծակ կամ բացուած». (42)

Ատիկա դամբարան մը ըլլալէ աւելի դուցէ կամուրջի հսկողութեան կամ մաքսահաւաքման շէնք մը ըլլայ ըստ իս: Նոյն առն յիշենք, որ այս շէնքին վրայ խաչի, արձանադրութեան, կամ եկեղեցական հաստատութեան հետք չկայ: Ասկէ դատ, Խօջայ Նազարի աղջիկ մը ունենալը երբեք յիշուած չէ: Ինչպէս որ Խօջայ Նազարի աղջկան այս դամբարանն է յերիւրածոյ, այնպէս ալ, ըստ իս եւ թա-

ւէրնիէի յիշած իրր թէ Խօջայ Նազարէն կառուցեալ պանդոկները ինծի կ'երեւան մեծ համբաւի մը լոկ արձագանգը, առանց որեւէ ճշմարտութեան:

Իմ ձեռագրաց հաւաքածոյին մէջ կայ մեծադիր ձեռագիր մը, որ մասամբ ճաշոց եւ մասամբ Յայսմաւուրք է, խառնիխուռն ու անկապ իրարու հետ կազմուած, երկուքն ալ խիստ պակասաւոր արուեստի տեսակէտով իր Մոնկոլ մանրանկարներով բացառիկ բան մըն է հայ ձեռագրաց մէջ եւ մեծապէս հետաքրքրական, սակայն հոս այդ մասին զանց կ'ընեմ խօսիլ՝ ուրիշ առթիւ վերապահած ըլլալով ըսելիքս*):

Այս իմ ձեռագրիս ճաշոցի հատուկոտորները 1670-էն են, իսկ Յայսմաւուրքի մասը, անթուական, ստացուած է Խօջայ Նազարէն եւ իր Սարֆրազ որդիէն:

Հոս ես նախ կը ներկայացնեմ Խօջայ Նազարով յիշատակարանները

55ր. Բ. «ողորմի ք(րիստո)ս Ա(ստուա)ծ ստացողի գրոցս. Խաւջայ Նազարին եւ կողակցին իւրոյ. եւ որդւոյն. պարոն Սարֆրազին.». Դարձեալ էջ 60ր. Ա. «ստացողի գրոցս. Խաւջայ Նազարին. եւ կողակցին իւրոյ. եւ որդւոյն. պարոն Սարֆրազին. էլիազին. Վաթանին եւ եղբարն. Խաւջայ Սաֆարին»: Նոյնը կը կրկնուի էջ 64ա. Բ. «ստացողի գրոցս Խաւջայ Նազարին եւ կողակցին իւրոյ. որդւոյն. պարոն. Սարֆրազին. էլիազին. Վաթանին եւ եղբօրն. Խաւջայ. Սաֆարին. եւ ծընաւդացն. Խօջայ. Խաչիկին. Մամին»: Նոյնը կը կրկնուի էջ 95ա. Բ. արանց «Մամին»:

Խօջայ Նազարի կնոջ անունը՝ Խաթուն Զան, որդիներուն անունները՝ Խօջայ Սարֆրազ, էլիազ եւ Վաթան:

Ասոնցմէ երէցը եւ ամէնանշանաւորը Խօ-

(41) Collections of Travels, etc., London, 1684, p. 19:

(42) «Սխական», — էջ 423ա:

*) Տես իմ ուսումնասիրութիւնս 3 լուսատիպ նկարներով, անգլիերէն, ի Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, 1941, April, pp. 145-148: